«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ի՞նչպես ձևավորել արժեքային համակարգ պատմություն և հասարակագիտություն առարկաների դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ասոյան

(Գավառի Գ. Մնացականյանի անվան N7 միջն. դպրոց)

ԳԱՎԱՌ **2023թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գրականության ակնարկ.....7

Գործնական համատեքստ.....11

Եզրակացություն.....14

Օգտագործված գրականություն.....15

Ներածություն

«Բարոյական ուժն է գոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհավասար կռվում. նա է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին՝ մեծ, մեծամեծ հակառակորդների դեմ»:

Գարեգին Նժդեհ

«Այն ազգը, որ դպրոցին մեծ կարևորություն չի տալիս,
անձնասպանություն է գործում»:
Գարեգին Առաջին

Ժամանակակից աշխարհում շատ կարևոր է մշակութային ինքնատիպության պահպանումը: Անհնար է պատկերացնել մի ազգ, որ գլոբալացման պրոցեսներում, այս բազմազան և օրեցօր զարգացող աշխարհում մնա ինքնամեկուսացված: Փոխազդեցությունների արդյունքում ազգերը ձևավորում են յուրօրինակ և նոր մշակույթ: Հանդուրժողականության միջոցով անհատը կամ քաղաքացին բաց է և ընկալունակ ամեն նորի և իր աշխարհայացքից խիստ տարբերվող իրականության առջև:

Ինչքան էլ որ կարևոր է ձևավորել առաջադեմ աշխարհի առջև բաց հասարա-կություն, սակայն ավելի կարևոր է պահպանել ազգային ինքնատիպությունը և հային բնորոշ արժեհամակարգը: Ազգային արժեհամակարգը դարերի ընթացքում եղել է հայ ժողովրդի դիմադրելու, պայքարելու, հաջողության հասնելու կարևոր գրավա-կաններից մեկը: Պատմությամբ ապացուցված է՝ այն պահին, երբ հայ ժողովուրդը հավատարիմ է եղել ազգային արժեհամակարգին, հավաքական ոգին ավելի մեծ հաջողություններ է արձանագրել, դիմագրվել է տարբեր փորձությունների: Արժեհամակարգի ձևավորման հիմնական երեք կարևորագույն ինստիտուտներն են հանդիսանում ընտանիքը, նախակրթարանը և դպրոցը: Այս երեք օղակների համագործակցված և հետևողական աշխատանքը կնպաստի ապագա սերնդի մեջ ձևավորելու այնպիսի արժեքային համակարգ, որը կբխի պետության և միասնական հայրենիքի շահերից:

Մեր երկրում աշակերտների արժեհամակարգի ձևավորումը, որպես կրթության բովանդակային բաղադրիչ, ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում: Այդ չափորոշչով նախատեսվում է սովորողների մեջ ձևավորել բարձր արժեհամակարգ:

Արժեհամակարգը իրենից ներկայացնում է անրճհատի հոգևոր, գեղագիտական, բարոյական, ազգային, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ, որը դարերի ընթացքում հղկվել է, և այն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ ներառված է ազգի անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմու-թյան, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Հանրակրթական դպրոցներում ամրագրվել են հայագիտական առարկաների տեղն ու դերը, որոնց մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայոց պատմությունը և հասարա-կագիտությունը: Փաստացի՝ այս առարկաները դասավանդող ուսուցիչները իրենց վրա են վերցնում պատասխանատվություն՝ հասարակության կայուն արժեհա-մակարգի ձևավորման գործում՝ աշակերտների մոտ զարգացնելով վերլուծական մտածողություն և կարողունակություն:

Հետազոտության նպատակը.

- Աշակերտի մոտ հիմնավորել ժողովրդավարության հիմնարար արժեքները,
- Հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալա-պես պատասխանատու քաղաքացու դաստիարակումը,
- Անհատի ձևավորման գործում կարևոր նշանակություն տալ այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ ազատությունը, հայրենասիրությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը և արժանապատվությունը,
- Կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:

Հետազոտության խնդիրները.

- Այսօր աճող սերնդի դաստիարակության գործը ընթանում է տարբեր հանգա-մանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների մոտ ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները,

- Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիա-բակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտե-լիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկա-յացված են առարկայական ծրագրերում:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու՝ ըստ նպատակի:

- Ուսուցիչը վերլուծելով առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ տարբեր ձևով են դրսևորվում: Ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով ուսուցիչը (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունա-վետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակ-չական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ և հոգատարությամբ վերա-բերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայ-տում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Գրականության ակնարկ

Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր զարգացման հիմնահարցը ազ–գային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում:

Աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա կան բազմաթիվ ազդող գործոններ, որոնցից մեկն էլ ավանդական դաստիարակությունն է, որի ձևավորումը կախված է ընտանիքից և սոցիալական միջավայրից: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Անձնական փորձից ելնելով՝ կարող եմ նշել հետևյալ օրինակը՝ հասարակագիտության դասերի ընթացքում հաճախ եմ օգտագործում «երեխան ընտանիքի հայելին է» արտահայտությունը: Դասերից մեկի ժամանակ, երբ բերեցի այս մեջբերումը, աշակերտներից մեկը կասկածի տակ դրեց այս մտքի ճշգրտությունը՝ ասելով, որ ինքը համաձայն չի այս մտքի հետ, քանի որ ինքը ընտանիքում ավելի ըմբոնումով է մոտենում որոշ հարցերի, քան դպրոցում (տանը՝ օրինակելի երեխա, դպրոցում՝ անկարգ աշակերտ): Ներկայացնելով, որ ընտանիքը մարդու արժեհամակարգի ձևավորման հիմնաքարն է, ու ենթագիտակցականում առկա փորձից ելնելով՝ երեխան ցույց է տալիս իր իսկ ընտանիքի օրինակը, այդ աշակերտի մոտ ճիշտ ընտրված միտքը դրական դիպված հանդիսացավ և հետագայում նկատելի դարձավ երեխայի մոտ դրական վարքագծի դրսևորումը: Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ ճիշտ ընտրված միտքը կարող է ճիշտ ուղու վրա դնել աշակերտին, և նման շատ մտքեր ու արժեքներ կարող են կիրթ ու մարդկային բարձր հատկանիշներով սերունդ դաստիարակել:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ հեղինակավոր անձինք: Հեղինակա-վոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական օրինակներ, այնպես էլ բացասական: Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդե-ցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիա-րակության վրա: Հետևաբար՝ արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա մյուս ազդող գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվու-թյունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը արտահայտվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակությունը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբե-րությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղային բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևոր գործոնը մանկավարժների կողմից աշակերտների մեջ կյանքի ճկատմամբ դրական վերաբերմունք, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում և ապրելու ունակության ձևավորումն է:

Ուսումնական հաստատությունների, ուսուցիչների նպատակն ու խնդիրն է սովորողների մեջ ձևավորել և զարգացնել արժեքային համակարգ, ազգային մտածողություն:

«Արժեհամակարգ» հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, իմացական, գեղագիտական, հոգևոր, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ թվարկված-ներից յուրաքանչյուրը փոխլրացնում են արժեհամակարգ հասկացությունը, օրինակ՝ բարոյական իմացական ընկալումը ձևավորվում է հասարակագիտություն առարկայի շնորհիվ, գեղագիտականը՝ նկարչության, հոգևորը՝ Հայոց եկեղեցու պատմության, մշակութային և էթնիկականը՝ Հայոց պատմության շնորհիվ և այլն:

Ժամանակակից մանկավարժության կարևորագույն նպատակներից մեկն է աշակերտի մեջ իր ազգային բարոյահոգեբանական արժեքների, դրանց ընկալման ձևավորումն ու պահպանումը: Նրա

առաքելությունն է պահպանել և փոխանցել մեր նախնիներից ժառանգած արժեքները, որն էլ հենց տարբերակող ինքնատիպությունն է համաշխարհային բազմազույն և բազմերանգ իրականության մեջ: [1]

Սերունդների կրթման և դաստիարակության գործում վիթխարի ներուժ ունի Հայոց պատմությունը, որը սովորեցնում է հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացին, իմանալով Հայոց պատմությունը, և ուսման ընթացքում ձեռք բերած գիտելիքներով ու հմտություններով կկարողանա ծառայել մեր հայրենիքի բարգավաճմանն ու հզորացմանը և կնպաստի հայկական քաղաքականության լավագույն սովորույթների պահպանմանն ու տարածմանը, պատկերացում կկազմի Հայաստանի և հայ ժողովրդի դերի ու նշանակության մասին համաշխարհային պատմության մեջ:[2]

Իր ողջ կյանքի ընթացքում մարդն առանձնացնում է առաջնայինը և երկրորդականը, կարևորը և ոչ կարևորը: Դրանով իսկ ստեղծում է իր արժեքային համակարգը , որը ոչ միայն նրա կյանքին տալիս է իմաստ և նշանակություն, այլև որոշում է նրա գործողությունները և արարքները: Այսպես՝ մի մարդու համար գերագույն արժեքներ կարող են հանդիսանալ նյութական բարիքները, իսկ մյուսի համար՝ հոգևոր արժեքները: Ոչ միայն մարդիկ, այլև ազգերն ունեն իրենց արժեքային համակարգերը:

Յուրաքանչյուր ազգի կենսագործունեություն խարսխված է այնպիսի արժեքների վրա, որոնք ամբողջացնում և ձևավորում են նրա ազգային դիմագիծը: Այդ արժեքներն սկզբնավորվում են ազգային բնորոշ և յուրահատուկ աշխար-հազգացողության, աշխարհընկալման և աշխարհըմբռնման միջոցով: Այն արժեք-ները, որոնք կազմում են տվյալ ազգի արժեհամակարգի առանցքը, կոչվում են հիմնարար արժեքներ, որոնք էլ որոշում են այդ էթնիկ ընդհանրության ազգային նկարագիրը:

Հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են՝ ազգը՝ որպես հավաքական ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք, լեզուն՝ որպես հայ ինքնության երաշխավոր, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը և հասարակական համերաշխության սկզբունքները՝ բարոյականության վերաբերյալ նրա պատկերացումները: [3]

Հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիք ունենալը հասարակագիտություն առարկայի առաքելությունն է: Այս առարկայի դասավանդումը նպաստում է պետականամետ գիտակցություն, ազգային դիմագիծ և էություն ունեցող, սեփական պետության և ազգի

---

[1] Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում,Երևան, 2002, էջ 65:

[2] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2003,էջ 5:

[3] Վ. Ղանդիլյան, Պ. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցու պատմության 11-րդ դասարանի դասագիրք, Երևան 2021թ., 8-9 էջ:

նշանակությունը պատմության էջերում գիտակցող քաղաքացու ձևավորմանը, ազգային համամարդկային արժեքային համակարգը կրող գիտակից սոցիալական և հասա-բակական անհատի զարգացմանը: Դասընթացի շնորհիվ ՀՀ ապագա քաղաքացին ձևավորված ազգային ինքնագիտակցությամբ և արժեհամակարգով կկարողանա նախ փոխել իրեն և իր գործունեությունը դարձնել պետականամետ ու հայրենամետ՝ նպաստելով ոչ միայն իր հայրենիքի, այլ նաև միջազգային մակարդակի հասարա-կության զարգացմանը: Վերոնշյալը փաստում է, որ դասավանդման հիմնական նպատակը աշակերտի արժեհամակարգի ձևավորմանը նպաստելն է:

Գործնական համատեքստ

Ժամանակակից դասին ներկայացվող կարևոր պահանջներից մեկն էլ ուսուցման մեթոդների ընտրությունն է, ավանդականի և նորագույնի համադրումը: Պատմության և հասարակագիտության դասին օգտագործվող արդյունավետ մեթոդներ են՝ մտագրոհը, Վենի դիագրամը, Т-աձև աղյուսակը, համառոտ դասախոսությունը, գաղափարների քարտեզագրումը, խճանկարը, բանավեճը, հասկացությունների քարտեզը, համագործակցությունը և այլն:

Համագործակցային ուսուցման ձևը նոր ժամանակների գլխավոր պահանջ-ներից է և արդյունավետ ձև է: Այն շատ է կարևորվում ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Խմբի անդամների համագործակցված աշխատանքը հնա-րավորություն է ընձեռում կարողությունների և հմտությունների, երևակայության տարբեր մակարդակ ունեցող աշակերտներին համախմբել ուժերը, ջանքերը ներդնել ընդհանուր նպատակին հասնելու գործում: Այս մեթոդը դասապրոցեսն ավելի բազմազան, հետաքրքիր է դարձնում, բարձրացնում երեխաների ինքնագնա-հատականը և խթանում մոտիվացիան:

Հասարակագիտության դասաժամին շատ օգտագործվող մեթոդներից է բանավեճը, որը հնարավորություն է տալիս սովորողին ազատ արտահայտել իր կարծիքն ու տեսակետը, նաև՝ զարգացնել վերլուծական և քննադատական մտածողությունը:

Դասընթացի կազմակերպման առանցքային մեթոդներից է համարվում նաև մտագրոհը (մտքերի տարափ): Մտագրոհը խմբային աշխատանքի պարզ, բայց արդյունավետ մեթոդ է: Դրա գլխավոր գործառույթը մտքերի խմբավորումն է: Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում, որ նրանցից յուրաքանչյուրը արտա-հայտում է սեփական տեսակետը, որը չի մեկնաբանվում: Բոլոր մտքերն ու գաղա-փարները գրանցվում են և ավելին՝ բոլոր մտքերն ու գաղափարները ընդունելի են. «սխալ» միտք չկա: Մտագրոհը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

Մտագրոհ մեթոդը առաջնորդվում է հետևյալ կանոններով՝

1. Ցանկացած քննադատության բացակայություն,
2. Գաղափարների խրախուսում,
3. Մասնակիցների հավասարություն,
4. Զուգորդումների ազատություն,
5. Բոլոր մտքերի գրառում:

Մեթոդի կազմակերպման ընթացքը. Անկրաժեշտ է ընդգծել, որ մտագրոհից հետո բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան արտահայտել իրենց տեսակետ-ները: Կարևոր է նաև ժամանակի սահմանափակումը՝ նախօրոք խմբին հայտնելով, որ նախատեսված է, օրինակ, տաս րոպե:

Այս մեթոդների կիրառմամբ կարելի է հետապնդել հետևյալ արդյունքները՝

- Սովորողներին գիտել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության և հասարակագիտության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել այդ անցյալից: Հայոց պատմության և հասարակագիտության խոր իմացութ-յունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին և տիրապետելու միջազգային հասա-բակարգի պահանջներին:
- Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

- Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով լցված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:
- Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:
- Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:
- Բացահայտել պատմական ճշմարտությունը, ճշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ պատմություն և հասարակագիտություն առարկաների դասավանդման հիմնական նպատակը հայ քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևա-վորումն է: Այս առարկաները նպաստում են պետականամետ գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության պատմությունը գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Այսօր արժեքային համակարգի ձևավորումը հանդիսանում է ուսումնական հաստատությունների գերխնդիրը և այն պետք է լինի մանկավարժների ուշադ-րության կենտրոնում:

Այս հետազոտական աշխատանքից ելնելով հանգում ենք այն մտքին, որ մատաղ սերնդի արժեհամակարգի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ուսումնական բոլոր առարկաները՝ հատկապես հայոց պատմություն և հասարակագիտություն առարկաները, որոնք անփոխարինելի նշանակություն ունեն ազգային գիտակցության և արժեհամակարգի ձևավորման գործում:

Սովորողները պետք է ծանոթ լինեն հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև հայ ժողովրդի առջև ծագած դժվարություններին ու կորուստներին: Այս ամենը պետք է օգտագործել Հայաստանի Հանրապետության համար լավ քաղաքացի, ազնիվ ու պարկեշտ մարդ դաստիարակելու գործում, ով կնպաստի հայոց պետականության հզորացմանը:

Սովորողը պետք է իմանա, թե որպես հայ ո՞րն է իր անելիքը հայրենիքում: Դա է պատճառը, որ մեր դպրոցներում կրթության հիմքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Դպրոցը պետք է լինի այն տարածքը բոլորի համար, որտեղ ձևավորվում են էթիկական նորմեր, որոնցով պետք է պայքարել հանրության մեջ տարածված արատավոր բարքերի դեմ և այդ պայքարում պարտավոր է լինել հաղթող:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002թ.:
2. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2003թ.:
3. Վ. Ղանդիլյան, Պ. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցու պատմության 11-րդ դասարանի դասագիրք, Երևան 2021թ.:
4. Հանրակրթության պետական կրթակարգ չափորոշիչներ, ծրագրեր, մեթոդներ, Երևան 2007թ.: